

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ-ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ  
ՎԱՐԺԱՐԱՆԻ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) հանրակրթական ծրագրերի կենտրոն-հենակետային վարժարանը (այսուհետև՝ վարժարան) ուսումնական ստորաբաժանում է, որը սովորողներին հնարավորություն է ընձեռում իրացնել ՀՀ սահմանադրության և ՀՀ «Կրթության մասին» օրենքով երաշխավորված կրթություն ստանալու իրենց իրավունքը՝ համաձայն ՀՀ կրթության մասին օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետի և ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների:
2. Վարժարանի հիմնադիրը ՀՊԱՀ-ն է ՀՀ Կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) համաձայնությամբ: Հանրակրթությանը զուգընթաց վարժարանը իրականացնում է նաև սովորողների նախամասնագիտական կողմնորոշում:
3. Վարժարանի հիմնական խնդիրներն ու նպատակներն են. հանրակրթական ծրագրերի պահանջների պարտադիր նվազագույնի յուրացման հիման վրա սովորողների անհատականության ձևավորումը, նրանց նախապատրաստումը ինքնուրույն կյանքի և աշխատանքի, հասարակական համակեցության, մասնագիտական կրթական ծրագրերի գիտակցական ընտրության և դրանց հետագա յուրացման հիմքերի ստեղծումը:
4. Վարժարանում ուսուցումն ու դաստիարակությունը իրականացվում է ի շահ անհատի բազմակողմանի զարգացման, նրա առողջության պահպանման, ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջների բավարարման:
5. Վարժարանի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, համամարդկային և ազգային արժեքների զուգորդման, անհատի բազմակողմանի զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

6. Վարժարանը պատասխանատու է պետական չափորոշիչներին համապատասխան, հանրակրթական պետական ծրագրերի իրագործման, աշակերտների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին, ընդունակություն-ներին, նրանց կյանքի և առողջության պահպանման, գիտական պահանջներին համապատասխան կրթական մեթոդների և ձևերի կիրառման համար:
7. Իր գործունեության ընթացքում վարժարանը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՊԱՀ-ի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
8. Վարժարանը իրավաբանական անձ չէ, կարող է ունենալ իր ձևաթղթերը և կնիքը:
9. Վարժարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Վարժարանը իրականացնում է հանրակրթական ծրագրերով ուսուցում 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում: Վարժարանի համալրումը այլ դպրոցներից կարող է կատարվել նաև 11-րդ և 12-րդ դասարաններից՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, գիտելիքների ստուգմամբ:
11. Վարժարանի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան 375033, Տերյան 74 (Կորյունի 19):

### **ՎԱՐՇԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ**

12. Վարժարանը ղեկավարում է տնօրենը: Վարժարանի տնօրենը պետք է բավարարի հանրակրթական հաստատության տնօրենին ներկայացվող չափանիշներին: Տնօրենին աշխատանքի է նշանակում համալսարանի ռեկտորը ընտրության արդյունքների հիման վրա՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ 5 տարի ժամկետով, պայմանագրային հիմունքներով:
13. Տնօրենը
  - կազմակերպում և ղեկավարում է վարժարանի գործունեությունը,
  - ռեկտորի հրամանագրմանն է ներկայացնում տնօրենի տեղակալին, ուսումնական մասի վարիչին, մանակավարժներին և մյուս աշխատողներին,
  - ներկայացնում է առաջարկություններ աշխատողներին և սովորողներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար,

- անհրաժեշտ պայմաններ է ստեղծում մանկավարժների մասնագիտական մակարդակի բարձրացման համար,
- վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման նկատմամբ,
- ռեկտորի գիտությամբ սահմանում է աշխատողների պարտականությունները, ապահովում ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, սանիտարահիգիենիկ վիճակի, աշխատանքի պաշտպանության պահանջների պահպանումը,
- իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է աշակերտների և աշխատողների համար,
- ղեկավարում և կազմակերպում է մանկավարժական, ծնողական խորհուրդների աշխատանքը,
- կազմում և ռեկտորի հաստատմանն է ներկայացնում հաստիքային ցուցակը և ծախսերի նախահաշիվն ըստ գործող նորմատիվների՝ բյուջեից տրվող միջոցների սահմաններում,
- ներկայացնում է վարժարանը պետական մարմիններում, ձեռնարկություններում և կազմակերպություններում: Կազմում է համապատասխան պայմանագրերի նախագծեր՝ ներկայացնելով ռեկտորի հաստատմանը:

14. Տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է տնօրենի տեղակալը՝ համաձայն ռեկտորի հրամանի:

15. Ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը՝

- պատասխանատու է ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների համար.
- վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի, աշակերտների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում աշակերտների ուսումնական ծանրաբեռնվածությունը.
- հրահանգավորում է մանկավարժական անձնակազմին, դասղեկներին, կազմակերպում մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ և ներկայացնում տնօրենի հաստատմանը

և պատրաստում է ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

- ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքը, ընդհանրացնում և տարածում լավագույն ուսուցիչների և դաստիարակների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

#### 16. Գաստիարակչական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը՝

- կազմակերպում և ղեկավարում է սովորողների արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները.
- ապահովում է վարժարանի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.
- կազմակերպում է սովորողների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու համար:

#### 17. Գաստեկը՝

- դաստիարակչական աշխատանք է տանում իրեն հանձնված դասարանի աշակերտների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.
- ապահովում է աշակերտների նկատմամբ դպրոցի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը.
- անհրաժեշտության դեպքում աշակերտների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
- իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, ղեկավարությանը ներկայացնելով աշակերտների առաջադիմության, հաճախումների և վարքի վերաբերյալ տեղեկություններ.
- կազմակերպում է աշակերտների առողջության ամրապնդմանը և ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային շրջագայություններ, կոնոնավորում օրվա ռեժիմը, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի նպատակային կազմակերպմանը.
- մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած աշակերտի հարցը.
- արգելում է աշակերտների, ուսուցիչների և ծնողների այն ձեռնարկումները, որոնք կարող են աշակերտի կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների կենսագործումը:

18. Ծնողների հետ վարժարանի արդյունավետ համագործակցության, դրա գործունեությանն աջակցելու նպատակով վարժարանին կից կարող են ստեղծվել հոգաբարձուների, ծնողական և այլ խորհուրդներ: Նշված խորհուրդների իրավասության շրջանակները սահմանվում են նախարարության հաստատած օրինակելի կանոնադրություններով:
19. Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ստեղծվում են խորհրդատվական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ:
20. Վարժարանի տնօրենը, տնօրենի տեղակալը, մանկավարժական աշխատողներն ատեստավորվում են նախարարության սահմանած կարգով:
21. Վարժարանում իրականացվում է միջնակարգ ընդհանուր կրթություն՝ հիմնական դպրոցի հիմքի վրա, ավագ դպրոցի ուսումնական պլան-ծրագրերով ուսուցման 2 տարվա տևողությամբ:
22. Վարժարանը կարող է իրականացնել գիտափորձնական և արտադրական աշխատանքներ:
23. Վարժարանը՝ որպես ավագ դպրոց, հիմնական կրթության հիմքի վրա ապահովում է աշակերտների միջնակարգ կրթության ծրագրերի յուրացումը, ճանաչողական հետաքրքրությունների զարգացում և ստեղծագործական ունակությունների ձևավորումը, տարբերակված ուսուցման հիման վրա՝ մասնագիտական կողմնորոշումը և նախամասնագիտական ծրագրի յուրացումը:
24. Վարժարանի աշակերտների մրցույթային ընդունելությունը կատարվում է ՀՀ ԿԳ նախարարության սահմանած կարգով:

**ՎԱՐՇԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

25. Վարժարանի հիմնական ուղղվածությունը բնական գիտությունների դասավանդումն է՝ ֆիզիկամաթեմատիկական, քիմիակենսաբանական, ֆիզիկաքիմիական ու մաթեմատիկաաշխարհագրական առանձին հոսքերով, որոնք կազմավորվում են ՀԳԱ ռեկտորատի առաջարկությամբ:

26. Վարժարանում պարտադիր ուսումնական ծրագրից դուրս, ըստ սահմանված կարգի, կազմակերպվում են նախասիրական պարապմունքներ, որոնց տեսակը որոշում է մանկավարժական խորհուրդը:
27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին: Ուսումնական տարվա տևողությունը 34 շաբաթ է: Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների:
28. Ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է՝ 45 րոպե տևողությամբ:
29. Տարեկան ուսումնական օրացույցային ժամանակացույցը, աշակերտների գիտելիքների գնահատման համակարգը, առաջադիմության և հաճախումների գրանցման և պետական ավարտական քննությունների անցկացման կարգը սահմանում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:
30. Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են վարժարանի ուսումնական պլաններով, կրթության և գիտության նախարարության հաստատած ուսումնական ծրագրերով: Վարժարանի ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական օրինակելի ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:
31. Վարժարանում ուսումնառության մեջ բացառիկ հաջողությունների հասած շրջանավարտները պարգևատրվում են գերազանցության մեդալով՝ նախարարության սահմանած կարգով:
32. Տարեկան գերազանց առաջադիմություն և օրինակելի վարք, ինչպես նաև առանձին ուսումնական առարկաներից գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները պարգևատրվում են գովասանագրերով:
33. Վարժարանի ուսումնադաստիարակչական աշխատանքի համակարգումը և տեսչավորումը իրականացնում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:
34. Վարժարանի գործավարությունը տարվում է ՀՀ օրենսդրության պահանջների և Կրթության և գիտության նախարարության հաստատած հրահանգի համաձայն:

### **ՎԱՐԱԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ԵՎ ԾՆՈՂԸ**

35. Աշակերտն իրավունք ունի՝
  - անվճար ստանալ միջնակարգ կրթություն.
  - անվճար օգտվել ՀԳԱ-ի վարժարանի գրադարաններից, ՀԳԱ մարզական համալիրից, մշակութային կառույցներից.
  - յուրացնելու նախասիրական, այդ թվում վճարովի, կրթական ծրագրեր, ստանալու վճարովի ծառայություններ.

- ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները.
  - մասնակցել հաստատության ներքին կյանքին, ընտրել աշակերտների ինքնակառավարման մարմիններ.
  - խրախուսվել օրինակելի վարքի և բարձր առաջադիմության համար:
36. Արգելվում է առանց ծնողների և աշակերտների համաձայնության աշակերտներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և վաժարանի կանոնադրությամբ:
37. Արգելվում է աշակերտի նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
38. Աշակերտը պարտավոր է՝
- կանոնավոր հաճախել ուսումնական պարապմունքներին, անհարգելի պատճառներով չբացակայել.
  - բարեխղճորեն սովորել.
  - խնամքով վերաբերվել վարժարանի գույքին.
  - հարգել աշակերտների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը.
  - պահպանել անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնները.
  - չծխել, չօգտագործել ոգելից խմիչքներ, թմրանյութեր:
39. Հակաիրավական գործողություններ կատարելու տևականորեն չառաջադիմելու, տնօրինությանն ու ուսուցիչներին պարբերաբար չենթարկվելու, անհարգելի պատճառով երկարատև բացակայելու համար թույլատրվում է, որպես ծայրահեղ միջոց, օրենսդրությամբ սահմանված կարգով, սովորողին հեռացնել վարժարանից:
40. Ծնողն իրավունք ունի՝
- պաշտպանելու երեխայի շահերն ու իրավունքները.
  - մասնակցելու վարժարանի կառավարմանը՝ ծնողական խորհրդի միջոցով:
41. Մանկավարժական աշխատանքի կարող է ընդունվել մանկավարժի որակավորում ունեցող մասնագետները և մանագետներ ՀԳԱ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմից: Ոչ մանկավարժական կրթությամբ մասնագետի աշխատելու կարգը և պայմանները սահմանում է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:
42. Մանկավարժները և մյուս աշխատողները իրավունք ունեն՝
- աշխատանքի, ըստ աշխատանքի քանակի և պետության սահմանած նվազագույն, երաշխավորված չափից ոչ ցածր վարձատրության.

- հանգստի.
- աշխատանքային օրվա և աշխատանքային շաբաթվա սահմանափակման.
- ամենամյա վճարովի արձակուրդի.
- աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների.
- ուսուցման և դաստիարակության ձևերի և մեթոդների, ուսումնական նյութերի և ձեռնարկների ընտրության, ստեղծագործական նախաձեռնության.
- որակավորման բարձրացման և նախապատրաստման.
- անհատական մանկավարժական գործունեության.
- խրախուսման, պարգևատրման, պատվավոր կոչումների շնորհման:

43. Մանկավարժները պարտավոր են՝

- աշակերտների մեջ պատվաստել ազգային և համամարդկային, բարոյական հատկանիշներ, նպաստել նրանց համակողմանի և ներդաշնակ զարգացմանը.
- ապահովել կրթական ծրագրերի կատարումը աշակերտների կողմից հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան ծրագրի նվազագույն յուրացումը.
- պայմաններ ստեղծել աշակերտների անհատական և ստեղծագործական ընդունակությունների բացահայտման և զարգացման համար.
- բարձրացնել իրենց որակավորումը.
- համագործակցել ծնողների հետ սովորողների ուսուցման և դաստիարակության հարցերում:

**ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ**

44. Վարժարանի ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և լրացուցիչ միջոցներից: Վարժարանը բյուջետային միջոցները ստանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ըստ ենթակայության:

45. Բյուջետային ֆինանսավորման նորմացույցները սահմանում է Կրթության և գիտության նախարարությունը:

46. Լրացուցիչ միջոցներն են՝ բարեգործական, նպատակային ներդրումները, վճարովի ուսումնամշակութային գործունեությունից առաջացած միջոցները, ՀՀ և օտարերկրյա ձեռնարկությունների, կազմակերպությունների ու քաղաքացիների



նվիրատվություններ, դաստիարակությանն օժանդակող այլ գործողություններից ստացված միջոցները:

47. Վճարովի ծառայությունները չպետք է իրականացվեն բյուջեից ֆինասավորվող գործունեության փոխարեն:

48. Ակադեմիայի ռեկտորը լրացուցիչ միջոցների հաշվին աշխատողների դրույքաչափերի ու աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել տարբերակված հավելումներ՝ մասնագիտական վարպետության, որակյալ աշխատանքի, մասնագիտությունների համատեղման և այլնի համար: